

**ԿԱՆԱԴԱՅԻ ՄԵՆԱՏԻ ԲԱՆԱՁԵՎԸ**  
**13 հունիսի 2002թ.**  
**ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ**

ՔԱՆԻ ՈՐ 1915 թ. ապրիլի 24-ին Օսմանյան Թուրքիայի իշխանություններն առանց որևէ պատճառի կամ հիմնավորման ձեռքակալեցին և հետո մահապատժի ենթարկեցին Ստամբուլի հայկական համայնքի 2300 ավելի նշանավոր ղեկավարների միայն նրանց ռասայական և կրոնական պատկանելիության պատճառով, դրանով իսկ 20-րդ դարի առաջին ցեղասպանության սկիզբը դրեցին,

ՔԱՆԻ ՈՐ օգտագործելով Առաջին համաշխարհային պատերազմը որպես քող իր գործողությունների համար, Օսմանյան Թուրքիայի իշխանությունները կարգադրեցին և իրագործեցին Հարավային Անատոլիայի և Կիլիկիայի վեց նահանգներում բնակվող հայերի ջարդերը, այդ տարածքներում հայերի ներկայությունն իսպառ բնաջնջելու փորձը,

ՔԱՆԻ ՈՐ օսմանյան Թուրքիայի իշխանությունները կոտորածներից հետո կենդանի մնացածներին տեղահանեցին իրենց տներից և հայրական հողերից,

ՔԱՆԻ ՈՐ պատմական փաստերը հստակ վկայում են որ, 1915- 1918 թթ. տեղ գտած դեպքերը, որոնք հանգեցրեցին Արևելյան Անատոլիայի և Կիլիկիայի հայ ազգաբնակչության կոտորածներին ու տեղահանությանը, նշանակում են ցեղասպանություն, ինչպես դա ձևակերպված է միջազգային սովորությանին իրավունքով և ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժի մասին 1948 թ. դեկտեմբերի 11-ի ՄԱԿ-ի կոնվենցիայում,

ՔԱՆԻ ՈՐ Թուրքիայի Հանրապետության կառավարությունը խեղաթուրում է պատմական փաստերը և ժխտում է հայերի ցեղասպանության փաստը,

ՔԱՆԻ ՈՐ Արգենտինայի, Բելգիայի, Ֆրանսիայի, Հունաստանի, Իտալիայի, Լիբանանի, Ռուսաստանի, Շվեդիայի, Ուրուգվայի խորհրդարանները, Եվրախորհրդարանը և Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը դատապարտել են Օսմանյան կայսրությունում հայ ազգաբնակչության կոտորածները և ճանաչել են, որ դա ցեղասպանություն է նշանակում,

ՔԱՆԻ ՈՐ հայերի ցեղասպանությունը ճանաչվել են նաև Քվեբեկի Ազգային ասամբլեայի, Օնտարիոյի օրենսդրական Ասամբլեայի և Կանադայի եկեղեցիների խորհրդի կողմից,

ՔԱՆԻ ՈՐ ցեղասպանությունը վերապրած հազարավոր հայեր և նրանց սերունդները ներկայումս ապրում են Կանադայում որպես քաղաքացիներ և հարստացնում են Կանադայի բազմազգ մշակութային ժառանգությունը,

ՔԱՆԻ ՈՐ Կանադան մի երկիր է, որը հպարտանում է օրենքի գերակայությամբ և մարդու իրավունքների ու ազատությունների հարգելով,

ՔԱՆԻ ՈՐ ապրիլի 24-ը դարձել է կանադահայերի և ընդհանրապես ողջ աշխարհում հայկական ծագում ունեցող մարդկանց համար խորհրդանշանական տարեթիվ,

ՔԱՆԻ ՈՐ հայերի ցեղասպանության մասին հարցի լուծումը կարող է օգնել նաև Հարավային Կովկասի մի շարք հնագույն հակամարտությունների խաղաղ կարգավորմանը,

ՈՐՈՇՎՈՒՄ է, որ այս պալատը կոչ է անում Կանադայի կառավարությանը`

ա) ճանաչել հայերի ցեղասպանությունը և դատապարտել պատմական ճշմարտությունը խեղաթուրելու կամ ժխտելու ամեն մի փորձ, երբ այն կներկայացվի

պակաս մեղմ, քան ցեղասպանությունն է, քան մարդկության դեմ կատարված հանցագործությունը, և

բ) ապագայում յուրաքանչյուր տարի ողջ Կանադայում ապրիլի 24-ը նշել որպես քսաներորդ դարի առաջին ցեղասպանության զոհ դարձած 1,5 միլիոն հայերի հիշատակի օր:

**Canada Senate**

June 13, 2002

**1st Session, 37th Parliament**

**Volume 139, Issue 124**

That this House calls upon the Government of Canada:

- to recognize the genocide of the Armenians and to condemn any attempt to deny or distort a historical truth as being anything less than genocide, a crime against humanity and
- to designate April 24<sup>th</sup> of every year hereafter throughout Canada as a day of remembrance of the 1.5 million Armenians who fell victim to the first genocide of the twentieth century.